



## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

### ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՒՄԻԼԻՆԱԿԱՆ ՀԱՆՌԵՍԱԸ ՊՈՒՔՐԵՇԻ ՄԵՋ

16 նոյեմբերի Պոքրեշի Հայ Մշակույթի Տան սրահին մեջ մեծ շուքով տոնվեցավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ի ծննդյան, բանասիրական գործունեության և քահանայության երբայակ հոբելյանը: Խոսեցան Առաջնորդական փոխանորդ Տ. Վազգեն վարդապետ և դոկտոր Ա. Տիրացյան:

Առաջինը Հոբելյարին աշակերտական և ուսանողական կյանքը յարվադծելի վերջը, ընդգրծեց մասնավորապես Գարեգին Կաթողիկոսի հոգևորական կյանքը և ուսումնասիրական հսկա աշխատանքները—պատմական, բանասիրական և մանրանկարչական, հիշատակելով անունները անոր գործերուն: Երկրորդը՝ ընկ. Ա. Տիրացյան, իբրև սան Հոբելյարին Գևորգյան ճեմարանի մեջ, խանդավառ շեշտերով պատմեց դրվագներ

ճեմարանի, մանավանդ Հոբելյարի կյանքին, պատկերացնելով միանգամայն տաննափայլուն այն շրջանը ճեմարանին, երբ հոն պաշտոնավարած են ականավոր գրական դեմքեր, ինչպես Օրմանյան Պատրիարք, Կ. Կոստանյանց, Ստ. Պալասանյան, Մանդինյան և ուրիշներ:

Գեղարվեստական մասին փայլ տվին տիկ. Ա. Սըվաճյան, տիկ. Մելինե Մինաս, օր. Ավագյան, ընկերներ Հր. Վարդանյան, Կ. Կարապետյան, ինչպես նաև ներդաղթի երգչախումբը, որ երգեց 3-4 կտորներ՝ Ն. Գրիգորյանի ճարտար դեկլավարության տակ: Երգչախումբը ունեցավ անսպասելի հաջողություն մը:

Շնորհավորական և մաղթանքի հեռագիրը, որ զրկվեցավ Հոբելյարին, կարդացվեցավ փաստաբան Եր. Սրապիտոնյանի կողմե:

(«Հայաստանեան Ճակատ» 23 նոյեմբեր 1947 թ.)

ՎԱԶԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

### ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 80-ԱՄՅԱԿԸ

«Բյուր ողջուն, երկար կյանք անզուգական եկեղեցական, ջերմ հայրենասեր, բազմավաստակ գիտնական, արկառոտ հորելյարի»:

«ԷՋՄԻԱՄԻՆ» ամսաթերթ

Ո՞ր ուսմանահայր հուզումով և հպարտությանմբ չի հիշեր այն օրերը, երբ ասկի 12 տարիներ առաջ, մեր հարազատ Սովետական Հայրենիքին այս երկիրը ժամանեց Տ. Գարեգին Սրբազան Արքեպիսկոպոս Հովսեփյանը, այսօրվան Շնորհազարդ Հոբելյար Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսը:

Ռոմանիան առաջին երկիրն էր, ուր ոտք դրավ Ս. Էջմիածնա Մայր Աթոռի և մե: Մայր Երկրի նվիրակը:

Եվ ինչ ոգևորություն ու նոր շունչ բերավ ան մեր այն ատենվան մշուշոտ, անհորիզոն իրականության մեջ...

Մայր Հայրենիքը և Ս. Էջմիածնի աննման

առաքյալը մեր հոգիները արևածաղկի նման  
գարձուց գեպի Արարատի ստորոտում ծաղ-  
կող Հայրենիքը, դեպի թանկագին Սովետա-  
կան Հայաստանը, դեպի հայ ժողովրդի կեն-  
դանություն արևը»:

Տ. Գարեգին Արքեպիսկոպոս նվիրյալ հո-  
գևորականի և մեծ հայրենասերի ջահերը  
ձեռքին երկրե երկիր, աշխարհն աշխարհ գը-  
նաց ու քարոզեց: Անցավ Ատլանտյանը ու  
հոն հայոց առաջնորդությունը վարելի հետո,  
1943-ին Տանն Կիլիկիո Կաթողիկոս ընտրվե-  
ցավ, որուն տարագիր Աթոռը Անթիլիասի  
մեջ կգտնվի այժմ:

Գարեգին Կաթողիկոս, անտարակույս, մեր  
օրերուն մեծագույն հայերեն մին է, թե՛ որ-  
պես հոգևորական, թե՛ որպես մշակութային  
և ազգային գործիչ:

Մեծ Լեոնային Ղարաբաղի Մաղավուզ  
գյուղը 1867-ին, իր ուսումը կստանա Արցա-  
խի վանքերուն, ապա Գևորգյան ճեմարանին  
և Լայբցիգի ու Մարպուրկի համալսարաննե-  
րուն մեջ, 1897-ին նվրոպայեն էջմիածին  
վերադառնալով կնվիրվի Հայ Նկեղեցվույն,  
հայ դպրոցին ու մշակույթին, գիտական լրիվ  
պատրաստությամբ մը, իմացական բացա-  
ռիկ կարողություններով և մանավանդ իրեն  
հատուկ այն ներքին եռանդովը, այն երկնա-  
ուք հուրովը, որ անշեջ մնաց իր հոգվույն  
մեջ հիսուն տարիներ շարունակ, միշտ նույն  
զբմովյամբ, միշտ նույն պայծառությամբ և  
առավելյալ թափով:

Վեհափառը վարդապետ կձեռնադրվի 1898  
-ին, երթման Հայրիկի օրով, և եպիսկոպոս՝  
1917-ին. առաջնորդական պաշտոններ կվարե  
Թիֆլիսի և այլ թեմերու մեջ, իսկ 1915-1917  
Գևորգյան ճեմարանի տեսուչ կկարգվի:

1915-1920 պատերազմներու ընթացքին մեծ  
դեր կկատարե հայ կյանքին մեջ, մասնա-  
վորաբար Վասպուրականի դաղթականության  
նպատի գործին կազմակերպման մեջ ու  
նաև այն մահու և կենաց կոիմներու շրջանին,  
զորս հայ ժողովուրդը ստիպված էր մղել  
ընդդեմ թրքական իմբերիալիզմին, որ կըս-  
պանար Ռուսահայաստանն ալ բնաջինջ  
ընել:

Մինչև իր արտասահման անցնիլը, այսին-  
քրն 1920-1934, երբ սովետական կարգերու  
շնորհիվ երկրին մեջ կյանքի և աշխատանքի  
խաղաղ ու ապահով պայմաններ կստեղծվին,  
Գարեգին Արքեպիսկոպոս կնվիրվի իր այն-

քան սիրած մասնագիտական ուսումնասի-  
րություններուն՝ պատմահնագիտական և հայ  
հին արվեստի գծով:

Բայց 1934-են վերջ ալ, նվրոպայի մեջ,  
ամեն տեղ իր վարչական ու կազմակերպչա-  
կան աշխատանքներուն հետ զուգահեռաբար,  
անդու կերպով իր ուսումնասիրությունները  
կշարունակե: Հայաստանի, Երուսաղեմի,  
Անթիլիասի, Վիեննայի ու Վենետիկի հայ մա-  
տենադարաններն ու ձեռագրադարանները  
այն կեդրոններն են, ուր վեհափառը ամիս-  
ներ ու տարիներ շարունակ պրպտած, ու-  
սումնասիրած է հայ ժողովուրդի անցյալն ու  
հին արվեստը, գրչությունն ու մանրանկար-  
չությունը մասնավորապես:

Հոբելյարին ցարյ հրատարակած գործերու  
թիվը քանի մը տասնյակ հատորներու կհաս-  
նի: Մեծ է թիվը նաև իր այն աշխատություն-  
ներուն, որոնք հրատարակվելու համար հեր-  
թի կապասեն: Անոնց մեջ ամենանշանավոր-  
ներն են «Ձեռագրական հիշատակարաններու  
հավաքածո»-ն՝ բաղկացած երեք սովոր հա-  
տորներն, և «Գրչագրական արվեստը հին հա-  
յոց մեջ» խոշոր գործը, որ Վեհափառին հե-  
ղինականություններուն գլուխ գործոցը պիտի  
ըլա:

Գարեգին Կաթողիկոս անդադական և մեծ  
է նաև որպես քարոզիչ ու հոեատոր, մեծ իր  
խոսքին պարզությամբը, ջերմությամբը և  
թուրքովը: Հավատքին հուրը կա իր հոգիին  
մեջ, թե ունին իր զգացումներն ու մտածոմ-  
ները և մեր ամբողջ պատմությունն է, որ իր  
հոգվույն մեջ կենդանություն ու լեզու կառ-  
նեն:

Իր ուխտին հավատարիմ մաքուր և ներ-  
շնչյալ հոգևորական, քաջ առաջնորդ և  
հովիտպետ իր սիրելի ժողովուրդին, անհոգ-  
նաբեկ և կշտադատ պրպտող հայ անցյալին,  
հմուտ և տաղանդավոր քննադատ հայ հին  
արվեստին, նվիրված ու խանդավառ հայրե-  
նասեր, ահա թե ով է մեր այսօրվան Ալե-  
գարդ Հոբելյարը՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոս  
Գարեգին Ա:

Փա՛ռք, պատի՛վ և երկա՛ր կյանք մեր Մեծ  
Հայրապետին:

Հայ ժողովուրդը անհուն երախտագիտա-  
կան զգացումով կխոնարհի անոր զմայլելի  
վաստակին առջև, և «պատվելով այս հոյա-  
կապ հոգևորականը, ազգը ինքզինքն է որ  
կպատվե»::

(«Հայաստանեան Ճակատ» 16 նոյեմբ. 1947 թ.)

11 նոյեմբեր 1947 թ.

Պուրբեջ